



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողների հոգեբանական զարգացման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Խալաթյան Դիանա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Վ.Համբարձումյանի անվան թիվ 17 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....	3
Տեղեկատվական տեխնոլոգիաներ, պատմական ակնարկ	5
Համակարգչային տեխնոլոգիաները կրթական համակարգում	9
Համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների կրթության և հոգեբանական զարգացման համակարգում.....	11
Եզրակացություն.....	12
Առաջարկություններ.....	14
Օգտագործված գրականություն.....	15
Էլեկտրոնային նյութեր.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հասարակության հումանիտար ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների հետ կապված՝ վերջին տասնամյակների ընթացքում մեծացել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց սոցիալական ինտեգրացիայի հիմնախնդրի նկատմամբ ուշադրությունը:

Երեխաների տեղեկատվական ռեսուրսների հասանելիության ավանդական եղանակները, որոնք հիմնված են այլընտրանքային նյութի (ձայնային) ներկայացման վրա, պահանջում են զգալի ժամանակ և նյութական ծախսեր և չեն կարող ապահովել, մարդկանց տեղեկատվական կարիքները մարդկային գործունեության տարբեր ոլորտներում (կրթական, մասնագիտական և այլն):

Հանրային տեղեկատվության փոխանակմանը երեխաների մասնակցությունն ապահովելու արդյունավետ միջոց կարող են լինել համակարգչային տեխնոլոգիաները, որոնք հատուկ ապարատային և ծրագրային ապահովման օգնությամբ հասանելի են դարձնում աշակերտներին ընդհանուր նշանակության համակարգչային տեխնոլոգիաների և ստանդարտների օգտագործումը:

Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում կրթության աշակերտների սոցիալական կարգավիճակի բարձրացման և պաշտպանության ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկը լիարժեք հանրակրթական, իսկ հետագայում նաև մասնագիտական կրթություն ստանալն է՝ հատկապես ԿԱՊԿՈՒ աշակերտների համար: Երեխաների կրթական և հետագա մասնագիտական գործունեության հաջողության անհրաժեշտ պայմանը օպերատիվ տեղեկատվության ազատ փոխանակման հնարավորությունն է, հետևաբար, նաև համակարգչային տեխնոլոգիաների յուրացումը՝ որպես դրա ապահովման գործիք:

Այսպիսով, ժամանակակից պայմաններում համակարգչային տեխնոլոգիաների յուրացման գործընթացը ձեռք է բերում բարձր սոցիալական նշանակություն՝ որպես աշակերտների սոցիալական ինտեգրման կարևորագույն գործոններից մեկը: Սակայն՝ տեխնոլոգիաների համակարգչային լինելը դեռևս չի արժանացել համապատասխան

ուշադրության, այս գործընթացը ինքնաբուխ է, չունի անհրաժեշտ մեթոդաբանական ուսումնասիրություն:

Հետազոտության նպատակը.

1. ուսումնասիրել ՀՀ-ում երեխաների կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները
2. պարզել՝ որքանով են սովորողները, հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները, օգտվում SՀS-ից
3. SՀS ազդեցությունը սովորողների զարգացման գործընթացում

Հետազոտության օբյեկտը երեխաների կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման գործընթացն է:

Հետազոտության առարկան երեխաների կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման միջոցները և մանկավարժական մոտեցումներն են:

Հետազոտության նպատակը, առարկան և օբյեկտը առաջ բերեցին և որոշեցին հետազոտության **հետևյալ խնդիրները.**

1. ուսումնասիրել հիմնախնդրի դրվածքը հատուկ գիտամեթոդական գրականությունում,
2. ուսումնասիրել համակարգչային տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ աշակերտների իրազեկվածության մակարդակը,
3. ուսումնասիրել ՀՀ-ում հիմնական կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառմանն ուղղված աշխատանքների դրվածքը, դրանց կիրառումը ՆԿ համակարգում
4. ընտրել և համակարգել ՀՀ-ում հիմնական կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառմանն ուղղված միջոցներ ու դրանց կիրառման պայմաններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ, պատմական ակնարկ

Արդի ժամանակաշրջանում աշակերտին համակարգչային գրագիտություն ուսուցանելու անհրաժեշտությունը որոշվում է մի կողմից համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությամբ, մյուս կողմից դրանց կիրառման բարդությամբ: Համակարգչային տեխնոլոգիաները կիրառելու համար աշակերտները պետք է տիրապետեն գիտելիքների և հմտությունների ամբողջական համակարգի, որոնք ներառում են ինչպես ընդհանուր տեղեկատվական մշակույթ, այնպես էլ տեխնիկաների կիրառման հատուկ միջոցներ: Համակարգչային գրագիտության և համակարգչային տիֆլոտեխնոլոգիաների օգտագործման հմտությունների յուրացումը, որպես տեսողության խանգարման փոխհատուցման միջոց, այն կարևորագույն խնդիրներից է, որը պետք է դրված լինի դպրոցի առջև. տալ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքներ և ապահովել շրջանավարտների մասնագիտական կողմնորշմանն ուղղված մոտեցումները:

Համակարգչային տեխնոլոգիաներ օգտագործելու կարողությունը հայ երեխաների աջակցության կարևոր բաղադրիչ է՝ իրենց արտերկրի հասակակիցների հետ շփվելու և հավասար մրցակցային հնարավորություններ ունենալու համար:

Այսօր համակարգիչները և թվային տեխնոլոգիաները դարձել են մեր առօրյա իրականությունը: Բայց որքանով է դա կիրառվում ի նպաստ կրթության: Համացանցը մեծաքանակ տեղեկատվության և հաղորդակցման նոր միջոց է:

Ավելորդ է նշել, որ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների չտիրապետող մարդը զգալիորեն սահմանափակված է իր հնարավորություններով: Մարդու անտեղյակությունը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից, համակարգչից օգտվելու անկարողությունը, զգալիորեն նվազեցնում է նրա արժեքը որպես աշխատաշուկայի մասնագետ, նվազեցնում է լավ աշխատանք գտնելու հնարավորությունները: Իզուր չէ, որ այսօր համակարգչային գիտելիքները կոչվում են երկրորդ գրագիտություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ պարզ է, որ դպրոցականի համակարգչով աշխատելու հիմնահարցը տարեցտարի դառնում է կարևոր խնդիր:

Այսօր ՏՀՏ ոլորտով հետաքրքրվող յուրաքանչյուր աշակերտ , որը կարողանում է լիարժեք կիրառել համակրգիչը կրթության ոլորտում, կարողանում է կատարել հետևյալ գործողությունները, ինչն էլ ավելի է հեշատացնում ուսուցման գործընթացը: Այդ գործողություններից են.

Ուսուցումը կատարվում է 2 փուլով՝

1. Ստեղնաշարի ինքնուսուցում
2. Փաստաթղթերի ձևակերպում և խմբավորում:

Ենթահամակարգը նախատեսված է ընթերցանության կամ խմբագրման պահանջվող ֆայլի ընտրության համար: Այստեղ ընդգրկված են 3 տիպի գրադարաններ.

- Տեքստային՝ տեքստային տիպի ֆայլեր
- Գրաֆիկական նկարների և այլ գրաֆիկական պատկերների համար
- Երաժշտական՝ ձայնային ֆայլերի , ինչպես նաև երաժշտության համար: Վերջինիս կիրառումն հատկապես արդյունավետ է թույլ տեսողություն ունեցող սովորողների համար:

Ուսուցման ընթացքում հանդիպում ենք որոշ դժվարությունների, որը պայմանավորված է նրանով, որ ոչ բոլորը տանն ունեն համակարգիչ: Այդ իսկ պատճառով բարդությավորում են ու դժվարանում ընկալել:

Մյուս խնդիրն այն է, որ շահագործողի հետ հաղորդակցման հիմնական լեզուն հայերենն է, կամ լավագույն դեպքում՝ ռուսերենը, ինչը սահմանափակում է շփման շրջանակը:

Հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն տեղեկատվությունների համար հնարավորություն է տալիս համակարգչի վրա կատարել հետևյալ գործողությունները.

- ա) Ինքնուրույն յուրացնել նշված անբուբենների դասավորությունները ստեղնաշարի վրա
- բ) Ընթերցել գրքեր և տպագրված փաստաթղթեր
- գ) Մուտքագրել, խմբագրել, պահեստավորել և տպել տարաբնույթ տեքստեր: Խմբագրման համար թույլատրելի են Microsoft Word-ի հայնտի բոլոր ֆունկցիաները
- դ) Լիարժեք դեկավարել նշված լեզուներով ինտերնետային կայքերը, ընթերցել էջի բովանդակությունը, կատարել անհրաժեշտ տեղեկատվության որոնումնում
- ե) Էլեկտրոնային փոստով առաքել և ստանալ տեքստային, գրաֆիկական և ձայնային ֆայլեր
- զ) Լիարժեք շահագործել Audio CD և Flash միջոցները
- է) Կատարել ձայնագրություններ, պահեստավորել և լիարժեք վարել ձայնային (Audio) գրադարանը
- ը) Մշակել երաժշտական ստեղծագործություն, խմբագրել վերարտադրել և տպել այն նոտաների տեսքով
- թ) Սկաներով մուտքագրել գրաֆիկական պատկերներ, տպել և լիարժեք վայելել գրաֆիկական գրադարանը
- ժ) Համակարգչի հետ շախմատ խաղալ
- ի) Վերակոդավորել սովորական տեքստեր /Unicode/
- լ) Կատարել թվաբանական հաշվարկներ /Calculator/
- խ) Պահանջել համակարգչից՝ տեղյակ պահել տվյալ ժամանակահատվածում պլանավորված անելիքների մասին
- ծ) Ունենալ էլեկտրոնային անձնական գրադարան
- կ) Ունենալ էլեկտրոնային ընդհանուր գրադարան
- հ) ունենալ էկրանի խոշորացուցիչ

ձ) փոփոխել ընթերցման արագությունը

ղ) փոփոխել ընթերցման ձայնը (տղամարդ, կին)

ճ) կատարել անցում մի լեզվից մեկ այլ լեզվի

ւ) համակարգն ունի շտապ օգնության ծրագիր, որն ստուգում և վերացնում է աշխատանքային գրադարանների անճշտությունները:

Այսպիսով ` համակարգչով աշխատելու ընթացքում շեշտը դրվում է համակարգչով աշխատելու հիմնական հմտություններ մշակելու, ստեղծագործական միտքն ու մոտեցումը խրախուսելու վրա, ինչն էլ նպաստում է սովորողի հոգեբանական զարգացմանն ու աշխարհայացքի ընդլայնմանը:

SՀS օգտագործումը որակապես փոխում է նաև ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր:

Համակարգչային տեխնոլոգիաները կրթական համակարգում

Կրթական համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման մասին կարելի է խոսել երկար, հատկապես վերջին երկու տարում: Որպես առավել տարածված միջոց համարվում է հեռավար կրթությունը, որը իրականացվում է համակարգիչների, հեռախոսների միջոցով: Այժմ կքննարկենք դպրոցականի համակարգչային տեխնոլոգիաների կիրառման հասանելիության հարցը: Համակարգչային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս տեղեկատվությունը ներկայացնել թվային ֆորմատով, իսկ սա նշանակում է, որ տեղեկատվությունը կարելի է ոչ միայն էկրանի վրա դուրս բերել, այլ խոսքային հատուկ ծրագրերով հնչունավորել, տպարգրել կետային շրիֆտով, մեծացնել պատկերն էկրանի վրա և այլն: Վերոնշյալը հնարավորություն է տալիս թույլ տեսողություն կամ լսողություն ունեցող, ինչպես նաև հենաշարժողական համարգի խանգարում ունեցող սովորողներին իրենց կարիքին համապատասխան օգտվելու էլեկտրոնային նյութերից: Քանի որ տեղեկատվությունը կարելի է պահպանել, այն կարելի է վերարտադրել այնքան անգամ, որքան անհրաժեշտ է նյութը յուրացնելու համար: Սա երեխային հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը հարմարեցնել ոչ թե պարապմունքների օրացուցակին, այլ սեփական անհրաժեշտություններին:

Յուրաքանչյուր անձ կարող է ընտրել աշխատանքի իր սեփական ռիթմը:

Սակայն պետք է նշել նաև մի շարք այլ գործոններ, որոնք դժվարեցնում են տեխնոլոգիաների կիրառումը երեխաների կողմից: Երեխաներից ոմանք կարողանում են աշխատել ինքնուրույն, իսկ մյուսները ուղղորդման, աջակցման անհրաժեշտություն են զգում:

Էլեկտրոնային կրթությունը կարող է դառնալ ավանդական միջոցներին լրացում, բայց ոչ մի դեպքում չի կարող փոխարինել ուսուցման ձևավորված ձևին:

Տեքստային ֆորմատի լուրջ թերություն է համարվում տեքստով արագ կողմնորոշման որևէ միջոցի բացակայությունը: Այդ պատճառով տեքստային ֆորմատն առավել տեղին է այն դեպքում, որտեղ ենթադրվում է նյութի հաջորդական ընթերցում:

Գոյություն ունեն տեքստային ֆորմատի PDF, HTML ձերը, որոնք ունեն լայն հնարավորություններ, որոնք թույլ են տալիս ներկայացնել ուսումնական և տեղեկատվական բնույթի նյութեր:

**Համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների կրթության
և հոգեբանական զարգացման համակարգում**

Վերջին տարիներին դպրոցականները կրթության ոլորտում ցուցաբերում են զգալի ակտիվություն:

Դպրոցականների հիմնական կրթությունն ստանալու գործընթացի հատուկ աջակցության համակարգի կազմակերպման համար բավարար քանակությամբ գիտականորեն հիմնավորված զարգացումներ և առաջարկություններ չկան :

Նրանց կրթության և հետագա մասնագիտական գործունեության գործընթացում ամենադժվար խնդիրներից մեկը տեղեկատվության փոխանակման խնդիրն է: Ներկայումս այս խնդիրն էլ ավելի է սրվել, քանի որ տեղեկատվության տեմպը զգալիորեն աճել է, իսկ տեղեկատվության փոխանակման պահանջները՝ ավելացել: Նման իրավիճակում աշակերտների՝ հատկապես կրթության աճանձնահատուկ պայմանների կհարիք ունեցող սովորողների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու և կրթական կամ այլ մտավոր գործունեության ոլորտում նրանց մրցունակությունն ապահովելու համար անհրաժեշտ է նրանց տալ գործիք, որը կապահովի հասարակության հետ տեղեկատվության հուսալի և արագ փոխանակում: Որպես այդպիսի գործիքներ կարող են ծառայել համակարգչային տեխնոլոգիաները: Համակարգչային տեխնոլոգիաների գրագետ օգտագործումը կարող է նշանակալիորեն նվազեցնել աշխատատարությունը և բարձրացնել աշակերտների համար հետագա բարձրագույն կրթությունն ստանալու գործընթացի արդյունավետությունը: Դրա հետ կապված մեծացել է համակարգիչ օգտագործողների մեթոդական աջակցության պահանջը: Այս նպատակին հասնելու հիմնական խնդիրը աշակերտների ուսումնական գործունեության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ադապտացիայի ներդրումն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը և վերլուծությունը, ինչպես նաև մեր կողմից իրակացրած հետազոտությունները թույլ տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1. ՀՀ-ում աշակերտների կողմից համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը հիմնական կրթության ոլորտում թեև արդիական է, բայց ունի իր դժվարություններն ու բացթողումները:

2. Գործնականում այդ հիմնախնդրին լիարժեք ուշադրություն չի դարձվում: Բավականին ցածր է իրազեկվածության մակարդակը, հետևապես այն ունի ավելի մասսայականացնելու խնդիր:

3. Բացահայտված է, որ ՀՀ-ում սովորող դպրոցականներն ունեն դժվարություններ՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառման, տեղեկատվական տարբեր աղբյուրից օգտվելու պակաս, սոցիալական ցանցերում շփման և հաղորդակցման, ինքնակրթությամբ զբաղվելու խնդիր: Դրանք հիմնականում պայմանավորված են համակարգչային տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ անլիարժեք տեղեկատվությամբ, միջոցների և մեթոդների, մեթոդական մշակումների բացակայությամբ:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ երեխան ստանում է շատ արդյունավետ լրացուցիչ միջոցներ՝ ապահովելու իր սոցիալական հավասարությունն ու հնարավորությունները: Սրա հետ մեկտեղ փոխվում է նաև նրանց ինքնագնահատականը՝ որպես հասարակության անդամ: Ինքնագնահատականի աճը իր հերթին կարող է խթան հանդիսանալ սոցիալական զարգացման շարունակման համար, օրինակ՝ սոցիալական կարգավիճակի բարձրացման և այլն:

5. Գործունեության ցանկացած փոփոխություն անմիջապես ազդում է տեղեկատվություն ստանալու, ճանաչելու, փոխազդեցության և ընկալման

գործընթացների վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաները դրական ազդեցություն ունեն նաև աշակերտների գործունեության վրա: Ճանաչողական գործընթացների կատարելագործումն ու օպտիմիզացումը անխուսափելիորեն ենթադրում են կրթական և գիտական գործունեության որակի բարելավում: Ընկալման ոլորտի կատարելագործումը բարձրացնում է շրջակա աշխարհը յուրացնելու գործունեության որակը:

Իրականացված հետազոտությունը և դրա արդյունքները բացահայտեցին , որ գործնականում ՀՀ-ում չտեսնող, թույլ լսողություն և հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձանց նախամասնագիտական կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման գործընթացում կան շատ բացթողումներ: Մասնավորապես, չնրանք իրազեկված չեն տարբեր ՀԿ-ների կողմից մատուցվող համակարգչային ծրագրերի ուսուցման ծառայությունների մասին, և առհասարակ գոյություն ունեցող , կիրառելի և հասանելի համակարգչային ծրագրերից:

Գործնականում, վեր հանելով խնդիրները և ձեռնարկելով որոշ քայլեր, հնարավոր կլինի բարձրացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական, նախամասնագիտական և մասնագիտական կրթության համակարգում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման կարևորության հարցը: Այն ավելի հասանելի է դարձնում կրթությունը, հնարավորություն է տալիս ավելի հեշտ հաղորդակցվել և հարմարվել տեղի ունեցող փոփոխություններին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կատարած հետազոտություններից պարզ դարձավ, որ Հայաստանի հանրապետությունում քիչ են այն աշակերտները, որոնք զբաղվում են

- համակարգչային գիտելիքների ուսուցմամբ,
- նրանք չեն տիրապետում բոլոր անհրաժեշտ ծրագրերին ,որն էլ խոչընդոտ է հանդիսանում արդի ժամանակաշրջանում անձի , այդ թվում հենց դպրոցականի կրթությանը, երբեմն նաև շփմանն ու հոգեբանական զարգացմանը

Հաշվի առնելով դժվարությունները՝ մեր կողմից մշակվել է առաջարկություններ դրանք հաղթահարելու համար.

- Մշակել հատուկ ծրագրեր , որոնք կիրառվեն դպրոցականներին համակարգչային տեխնոլոգիաների ուսուցման հնարավորությունների մասին
- Ծրագրերը ներդնել հենց դպրոցներում
- Վերապատրաստել բոլոր ուսուցիչներին
- Հնարավորության դեպքում ծրագրերը հայաֆիկացնել, որպեսզի ավելի մատչելի ու հասկանալի լինեն բոլորի համար
- Համակարգչի միջոցով անցկացնել նաև պարապմունքներ, մեկ շաբաթվա ընթացքում երկու անգամ, իսկ ժամանակահատվածքը ընտրել՝ կախված տարիքային և նյարդային առանձնահատկություններից և, ամենակարևորը, աշակերտի ընկալման հնարավորություններից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց; Ձեռնարկ մանկավարժների համար/Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. -Երևան: Էդիթ Պրինտ, 2022. -142 էջ:
2. Ուսումնական նյութերի հարմարեցումներ: Ազարյան Ռ.Ն. Վ.Հ.Խալաթյանի խմբագրությամբ :Երևան 2001 , 300էջ
3. Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն, Հատուկ կրթություն մեթոդական տեղեկատու 13: Երևան 2015, «Աստղիկ գրատուն» 136 էջ:
4. Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց ՊՈԱԿ : Երևան 2013,«Աստղիկ գրատուն» 112 էջ:
5. Մարության Մ.Կ. «Թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման գնահատման մեթոդիկա»: Երևան 2001 , 143էջ
6. Андерсен, Б. Мультимедиа в образовании / Б. Андерсен, В.Д. Бриик. - М.: Дрофа, 2007. - 213 с.
7. Алексеев О. Л. Некоторые теоретические аспекты дошкольной тифлопедагогике // Психолого-медико-педагогическая социальная реабилитация детей с нарушениями зрения. Проблемы преемственности в специальном образовании сб. науч. тр. /Под. ред. О. П. Алексеева. З. П. Малеевой. Челябинск 2002 Ч. 2.
8. Бодалев А.А. Восприятие и понимание человека человеком. М., 2006;200 ст. Науч. ред. С.С. Лебедева. - СПб.: СПбГИПСР; СПб ПРЦ, 2014. - Изд-во ООО «СПб СРП <<Павел» ВОГ», 2014. - С. 106-110.
9. Большой психологический словарь / Б. Мещеряков, В.П. Зинченко. - М.: Астрель/АСТ, 2009. - 816 с. [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.books.ru/books/bolshoi-psikhologicheskii-slovar-821561> (дата обращения: 15.12.2015).

10. Денискина В. З. Особенности обучения социально-бытовой ориентировке детей нарушением зрения Игошен Уфа Фил. МГОПУ им. Шолохова, 2004, 182 с.
11. Денисова. Т. Компьютер в дошкольном учреждении // Дошкольное воспитание - 2011.-№2.-С. 23-25
12. Игошев Б. М. Системно-интегративная организация подготовки профессионально мобильных педагогов автореф. дис. ... д-ра пед. наук 13.00.08. М., 2008.
13. Интернет в профессиональной деятельности. Научно-методический сборник /Под редакцией Д.Т. Рудаковой.-М ИОСО РАО, 2003. 160 с.
14. Кантор В.З. Инвалиды по зрению пожилого возраста: стиль жизни как предмет реабилитационно-педагогического изучения // Инвалиды и лица пожилого возраста в современной социально-образовательной ситуации: теории, опыт, перспективы Науч. ред. С.С. Лебедева 1. М. Безух: СпбГИПСР - Спб., 2015. -С. 10-21.
15. Кантор В.З. Педагогическая реабилитация и стиль жизни слепых и слабовидящих. Спб. : КАРО, 2004, 230 с
16. Королева, Н. Петрова. С. Использование новых информационных технологий в образовательном процессе детского сада // Дошкольное воспитание. - 2010.-N 6. С 31-3
17. Кравков С.В., Соловьев И.М. исследовавшие взаимодействие анализаторов,115 с.
18. Кукушкина О.И. Компьютер в специальном обучении. Проблемы. Поиски. ПОДХОДЫ/О.и. Кукушкина // Дефектология. - 1994. - N 5. - С. 3-9.
19. Кукушкина, О.И. Программа "Мир за твоим окном / О.И. Кукушкина //Дефектология - 1996. - № 5. - С. 66-72
20. Кулакова Н.А. Технологии реабилитационного процесса поздноослепших как способ оптимизации образа жизни и интеграции в социум // Совершенствование общего и профессионального образования инвалидов в процессе реабилитации с. Науч. ред. С.С. Лебедева. - Спб.: СпбГИПСР: Спб Прц. 2014. - Изд-во 000 Спб СРП «Павел ВОГ, 2014. - с 106-110
21. Кулькова Е.Я. Инновационные технологии в развитии познавательной активности

обучающихся нарушением зрения // Реализация социальных С функций непрерывного образования в процессе подготовки социально-педагогических кадров: Монография / РОО <<Дом Европы в Санкт-Петербурге

22. Литвак А.Г. Психология слепых и слабовидящих: Учебное пособие для студентов высших педагогических учебных заведений / А.Г. Литвак. - СПб.: Каро, 2006. - 328с.
23. Матюхина М.В., Михальчик Т.С., Прокина Н.Ф. Возрастная и педагогическая психология: Учебное пособие для студентов педагогических институтов. - М, Просвещение, 2009., 256 с.
24. Машбиц. Е.И. Психолого-педагогические проблемы компьютеризации обучения/ Е.И. Машбиц.-М.: Педагогика. - 1988. - 192 с.
25. Медицинская реабилитация / Под ред. В.М. Боголюбова. Книга 1. - М. БИном, 2010. - С. 6-8
26. Морев И.А. Образовательные информационные технологии. Часть 3. Дистанционное обучение: Учеб. пособие. / И.А. Морев Владивосток: Изд-во Дальневосточного университета, 2004. - 150 с.
27. Мухина В. С. Возрастная психология. М., Изд. Центр Академия, 2000 , 456 с.
28. Основы специальной психологии: учебное пособие для студентов педагогический учебных заведений/ [Л.В. Кузнецова, Л.И. Переслени, Л.И. Солнцева и др.]; под редакцией Л.В Кузнецовой. - 5-е издание, - М.: Издательский центр «Академия», 2008., 480 с.
29. Платонова Н.М. Платонов М.Ю. Инновации в социальной работе. Учеб. пособие 2 е изд. -М. Академия 2012. - 256 с.
30. Репина З. А.. Лизунова Л. Р. Новые информационные технологии: специализированная компьютерная логопедическая программа «Игры для Тигры» Вопросы гуманитарных наук, 2004, № 5 (14). с. 285-287.
31. Селевко Г.К. Энциклопедия образовательных технологий. М. 2002, 816 с.
32. Солнцева Л.И. Психология детей с нарушениями зрения. - М. 2006.

33. Специальная психология: Уч. пособие для студ. ВУЗов. / Под ред. В.И. Лубовского. – 2-е изд., испр. - М.: «Академия», 2005,464 с.
34. Тупоногов Б.К. Тифлопедагогические требования к современному уроку //Методические рекомендации.-М.,1999, 40 с.
35. Холостова Е. И. Социальная реабилитация : учеб. пособие для студентов вузов. М.: Дашков и К 2006. 216 с.
36. Храпылина Л. П. Реабилитация инвалидов. М.: Экзамен, 2001, 180 с.
37. Шевчук, Л.Е. Интегрированное обучение учащихся с особенностями развития в общеобразовательном учреждении / Л.Е. Шевчук // Дефектология. -2004. - №6,с.155
38. Школы для всех: Включение детей со специальными нуждами в образование. – Лондон: Фонд «Спасите детей», 2002,с. 86
39. Швецов В.И., Рощина М.А. Инновационная образовательная программа Нижегородского государственного университета им. Н.И. Лобачевского “Компьютерные тифлотехнологии в социальной интеграции лиц с глубокими нарушениями зрения”.Нижний Новгород 2007, с. 156 / Ред.: С.С.Лебедева, С.М. Безух, Я.Т. Рзаева. - СПб. СПбГИПСР, 2015. - 136 с.

Էլեկտրոնային կուրսեր

1. https://www.typingstudy.com/ru/games/falling_words?fbclid=IwAR0L5dQF7KuTOzi4skaEgDkphXajCfevU6b7oOTSpIBaoHUbGHEBwKIRaU0
2. <https://xn----7sbbrc6a3acms7c6c6a.xn--p1aj/flesh-igry/?fbclid=IwAR0P5j1wcBmmlcOwqheU-9-KbcvbNK2FqFsGYfwm9m3e2RrHHooZDZFvZUs>
3. <https://youtu.be/-itoNngx0IY>
4. <https://youtu.be/shgbXHdpKK8>